



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2008թ. մայիսին /վերլուծություն/

2008թ. մայիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 13188 գործարքներ, որոնց քանակը 2007թ. մայիսի համեմատ աճել է 16.7%-ով, իսկ 2008թ. ապրիլի համեմատ նվազել՝ 4.9%-ով:

2008թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4765 օտարման գործարքների 82.7% կազմել են առուվաճառքները, 15.3%՝ նվիրատվությունները և 2.0%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 31.3%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 32.1% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2008թ. մայիսին, 2008թ. ապրիլի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն նվազել է 1.6%-ով, իսկ 2007թ. մայիսի համեմատ աճել՝ 6.4%-ով:

2008թ. մայիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 60.0% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2008թ. ապրիլի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 2.8%-ով, իսկ 2007թ. մայիսի համեմատ՝ 21.2%-ով:

2008թ. մայիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	մայիս 2007թ.	մայիս 2008թ.	ապրիլ 2008թ.
Կենտրոն	453600	477400	471300
Արաբկիր	362500	416300	409900
Քանաքեռ-Զեյթուն	261200	307300	306800
Նոր-Նորք	225200	276200	270300
Ավան	209400	268300	268100
Էրեբունի	217600	274000	267000
Շենգավիթ	234700	279300	274200
Դավթաշեն	240100	290200	283200
Աջափնյակ	230100	280300	280000
Մալաթիա-Սեբաստիա	216900	266000	260300
Նուբարաշեն	122000	151500	151500
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	252100	298800	294800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. մայիսին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. ապրիլի համեմատ աճել են 1.4 %-ով:

2008թ. մայիսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 441 բնակարաններ, որոնց քանակը 2008թ. ապրիլի համեմատ նվազել է 7.5%-ով, իսկ 2007թ. մայիսի համեմատ՝ 2.6%-ով:

2008թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մայիս 2007թ.	մայիս 2008թ.	ապրիլ 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	102400	127000	121500

	Ապարան	28600	33100	33000
	Թալին	36100	43300	42000
Արարատ	Արտաշատ	81500	94500	94300
	Մասիս	88700	130000	124500
	Վեդի	58100	79500	79100
	Արարատ	54600	59700	59400
Արմավիր	Վաղարշապատ	125600	165800	162500
	Արմավիր	86300	117900	115000
	Մեծամոր	56600	78500	76300
Գեղարքունիք	Սևան	58700	89500	85600
	Գավառ	33600	45800	44100
	Մարտունի	48900	68400	68200
	Վարդենիս	26200	31500	30500
	Ճամբարակ	14700	16000	15900
Լոռի	Վանաձոր	69600	89700	86200
	Ստեփանավան	33700	45800	45500
	Մայիսակ	44800	60800	60400
	Ալավերդի	24900	29900	29300
	Տաշիր	24000	30600	30500
	Թումանյան	5400	5600	5600
	Շամլուղ	3000	3200	3200
	Ախթալա	11600	12900	12700
Կոտայք	Աբովյան	140300	175300	168800
	Նոր Հաճն	95300	121500	121300
	Բյուրեղավան	70100	100000	95700
	Եղվարդ	85700	116500	112000
	Հրազդան	47700	67500	65100
	Ծաղկաձոր	89600	142900	142600
	Չարենցավան	58900	90300	87000
Շիրակ	Գյումրի	66200	96200	92100
	Արթիկ	42800	53700	53600
	Մարալիկ	24800	26500	26400
Սյունիք	Գորիս	69500	104400	101000
	Կապան	63100	86700	86200
	Սիսիան	50600	71100	68400
	Մեղրի	36900	46300	45100
	Ագարակ	23900	29000	28900
	Քաջարան	31000	47500	46000
	Դաստակերտ	6800	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	55400	75400	73300
	Եղեգնաձոր	70300	95400	95000
	Զերմուկ	102800	123800	123500
Տավուշ	Դիլիջան	63600	89100	86000
	Իջևան	85800	115700	115200
	Բերդ	33000	38200	37700
	Նոյեմբերյան	27800	29900	29900
	Այրում	18000	21100	21100

2008թ. մայիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2008թ. ապրիլի համեմատ աճել են 2.3%-ով:

2008թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 500 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 117, մյուս մարզերում միասին վերցրած՝ 383: 2008թ. ապրիլի համեմատ, անհատական բնակելի

տների առուվաճառքների գործարքների քանակն նվազել է՝ 7.7%-ով, ընդ որում Երևանում՝ 14.6%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 5.4%-ով: 2007թ. մայիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն նվազել է 1.2%-ով, ընդ որում Երևանում աճել է 24.5%-ով, իսկ մյուս մարզերում՝ նվազել 7.0%-ով:

2008թ. մայիսին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	մայիս 2007թ.	մայիս 2008թ.	ապրիլ 2008թ.
Կենտրոն	462700	491300	489000
Արաբկիր	365200	420700	414700
Քանաքեռ Զեյթուն	264000	315000	312200
Նորք Մարաշ	227700	283400	278400
Ավան	211800	274500	272800
Էրեբունի	222500	276600	268600
Շենգավիթ	236900	282200	275600
Դավթաշեն	244300	295400	290900
Աջափնյակ	233900	286000	282800
Մալաթիա Սեբաստիա	220100	273500	270900
Նուբարաշեն	125600	158300	157100
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	255900	305200	301200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. մայիսին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. ապրիլի համեմատ աճել են 1.3 %-ով:

2008թ. մայիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		մայիս 2007թ.	մայիս 2008թ.	ապրիլ 2008թ.
Արագածոտն	Աշտարակ	104700	129500	124500
	Այաթան	33000	35900	35500
	Թալին	38900	45700	45000
Արարատ	Արտաշատ	84300	100600	99500
	Մասիս	91300	131500	128200
	Վեդի	61000	87600	85200
Արմավիր	Արարատ	59200	65400	64900
	Վաղարշապատ	127400	168500	164800
	Արմավիր	89600	122200	120600
	Սևան	60700	91400	87800

Գեղարքունիք	Գավառ	37800	47600	46200
	Մարտունի	52800	72000	70000
	Վարդենիս	30100	33200	32700
	Ճամբարակ	17300	20000	19800
Լոռի	Վանաձոր	73900	93200	91400
	Ստեփանավան	37800	51500	51000
	Սյիտակ	48800	66100	65500
	Ալավերդի	28900	32300	31300
	Տաշիր	27000	34400	34000
	Թումանյան	8100	9900	9600
	Շամլուղ	5200	6400	6400
Կոտայք	Արսիկ	144000	179200	172700
	Նոր Հաճն	102400	125900	124100
	Բյուրեղավան	72600	101700	97300
	Եղվարդ	89800	119000	115400
	Հրազդան	52300	69300	66700
	Ծաղկաձոր	118200	227500	217700
	Չարենցավան	60400	91900	88400
Շիրակ	Գյումրի	70800	98400	96600
	Արթիկ	45200	57600	57100
	Մարալիկ	27400	31000	30700
Սյունիք	Գորիս	72200	107400	103000
	Կապան	65500	91100	89600
	Սիսիան	55100	73000	71100
	Մեղրի	39600	49400	48800
	Ագարակ	26600	32100	31800
	Դաստակերտ	9600	10200	10200
Վայոց Ձոր	Վայք	59300	78500	77100
	Եղեգնաձոր	71200	101000	98800
	Ջերմուկ	50600	78500	76000
Տավուշ	Դիլիջան	67200	94000	90700
	Իջևան	86700	123700	121800
	Բերդ	36300	40500	40200
	Նոյեմբերյան	30900	35300	35300
	Այրում	19200	22800	22800

2008թ. մայիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2008թ. ապրիլի համեմատ աճել են 2.5%-ով:

Ընդհանուր առմամբ, 2008թ. մայիսին հանրապետությունում օտարվել են 1990 միավոր /1557.11 հա/ հողեր, որից Երևանում` 122 միավոր /15.41 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 62 միավոր /47.82 հա/ հողեր, որից Երևանում` 24 միավոր /6.31 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 799 միավոր /1398.42 հա/, որից Երևանում` 7 միավոր /1.88 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 699 միավոր /64.75 հա/, որից Երևանում` 79 միավոր /5.86 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 451 միավոր /55.22 հա/, որից Երևանում` 32 միավոր /7.18 հա/,

- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 31 միավոր /32.62 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.50 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 6 միավոր /4.64 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 4 միավոր /1.46 հա/

2008թ. մայիսին հանրապետությունում օտարված հողերից 1863 միավորի /1520.56 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 112 միավոր /14.41 հա/, նվիրատվության գործարքներ՝ 104 միավորի /31.77 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.59 հա/ և փոխանակության գործարքներ՝ 23 միավորի /4.79 հա/, որից Երևանում՝ 5 միավոր /0.41 հա/:

Հանրապետությունում 2008թ. մայիսին, 2007թ. մայիսի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 10.2%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 0.5%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ աճել՝ 16.2%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 2.5 անգամ: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 624.67 հա, որից 601.91 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 43.0% կամ 802 գործարքներ /617.37 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 26 գործարքներ /1.78 հա/, իսկ 56.9% կամ 1060 միավորը /902.77 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 86 միավոր /12.63 հա/:

2008թ. մայիսին հանրապետությունում գրանցվել է հողերի կառուցապատման իրավունքի վաճառքի 1 գործարք /0.42 հա/:

Ստորև ներկայացվում է 2008թ. մայիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					քանակի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						քանակի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	4	0.50	7	0.51	15	0.78	7	1.88	0	0.00	64	4.73	15	6.02
Արագածոտն	27	87.51	1	0.02	2	0.20	4	0.30	90	71.81	0	0.00	54	4.77	3	0.15
Արարատ	39	123.38	8	26.15	43	4.72	44	23.23	71	24.38	0	0.00	58	5.90	15	1.58
Արմավիր	15	17.32	6	2.43	4	0.10	65	1.32	103	584.59	0	0.00	106	9.31	8	9.60
Գեղարքունիք	5	4.60	0	0.00	15	1.92	20	1.67	11	14.57	0	0.00	6	1.10	1	0.04
Լոռի	2	2.31	1	0.08	6	0.89	47	1.37	46	21.76	0	0.00	13	2.08	5	0.07
Կոտայք	95	207.60	5	0.46	63	5.35	78	3.77	134	58.73	0	0.00	119	10.44	13	0.77
Շիրակ	3	6.48	4	1.36	15	0.66	25	1.73	22	19.63	0	0.00	11	1.19	1	0.003
Սյունիք	0	0.00	0	0.00	1	0.02	8	0.41	21	23.86	0	0.00	6	0.43	1	0.02

Վայոց Ձոր	21	84.10	0	0.00	18	1.96	65	1.04	5	1.47	0	0.00	7	0.74	3	0.21
Տավուշ	1	0.10	1	0.02	10	0.70	6	0.05	16	13.66	0	0.00	19	1.86	0	0.00
Ընդամենը	208	533.40	30	31.02	184	17.03	377	35.67	526	836.34	0	0.00	463	42.55	65	18.46

Ստորև ներկայացվում է 2008թ. մայիսին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ՄԱՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	20	0.98	4	0.50	4	0.05	12	0.43	6	0.81	0	0.00	0	0.00	3	0.46	3	0.35
Արագածոտն	2	0.15	0	0.00	0	0.00	2	0.15	32	87.88	27	87.51	1	0.02	2	0.20	2	0.15
Արարատ	15	14.94	1	0.47	1	0.02	13	14.45	119	162.54	39	123.38	7	25.68	42	4.70	31	8.78
Արմավիր	14	0.18	0	0.00	0	0.00	14	0.18	76	21.00	15	17.32	6	2.43	4	0.10	51	1.15
Գեղարքունիք	9	2.30	0	0.00	5	1.18	4	1.12	31	5.89	5	4.60	0	0.00	10	0.74	16	0.55
Լոռի	6	0.20	1	0.08	0	0.00	5	0.12	50	4.45	2	2.31	0	0.00	6	0.89	42	1.25
Կոտայք	12	0.55	1	0.22	7	0.26	4	0.07	228	216.48	94	207.45	4	0.24	56	5.09	74	3.70
Շիրակ	15	0.55	2	0.06	6	0.20	7	0.29	32	9.68	3	6.48	2	1.30	9	0.46	18	1.44
Սյունիք	1	0.02	0	0.00	1	0.02	0	0.00	8	0.41	0	0.00	0	0.00	0	0.00	8	0.41
Վայոց Ձոր	4	0.18	0	0.00	0	0.00	4	0.18	100	86.92	21	84.10	0	0.00	18	1.96	61	0.86
Տավուշ	2	0.05	1	0.02	1	0.03	0	0.00	16	0.81	1	0.10	0	0.00	9	0.66	6	0.05
Ընդամենը	100	20.10	10	1.35	25	1.76	65	16.99	698	596.87	207	533.25	20	29.67	159	15.26	312	18.69

Հանրապետությունում 2008թ. մայիսին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 1 գործարք /0.14 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2008թ. մայիսին 2007թ. մայիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 13.1%-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 70.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել՝ 15.9%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 18.2%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ աճել՝ 26.2%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել՝ 39.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 2.5 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. մայիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների				Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների			
	Միավորների քանակ	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/	Միավորների քանակ	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		

			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	25	69.71	33.9	851.3	159.2	72	26.65	365.0	12000.0	3252.1
Ապարան						8	9.62	86.5	2727.3	425.1
Թալին	2	17.80	34.4	38.3	36.4	5	25.11	93.6	5494.5	451.2
Ծաղկահովիտ						5	10.42	79.5	1000.0	192.5
Արարատի մարզ										
Արտաշատ	13	6.55	109.1	606.8	460.7	24	7.18	335.1	10833.3	1720.2
Մասիս	11	18.95	27.2	415.0	106.5	24	6.79	200.0	11904.8	2154.5
Վեդի	15	97.88	318.2	9364.6	1924.3	21	9.44	207.0	10795.1	1500.1
Արմավիրի մարզ										
Արմավիր	3	2.76	35.4	40.6	38.8	25	17.30	294.3	9090.0	1092.5
Բաղրամյան						11	532.06	90.6	2561.1	635.0
Վաղարշապատ	12	14.56	35.6	1109.6	790.7	47	25.29	444.4	11764.7	1945.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								199.8	1875.0	410.5
Ճամբարակ	2	0.20	350.0	692.0	521.0	4	2.83	60.5	953.3	174.2
Մարտունի	1	0.10	1126.0	1126.0	1126.0	2	0.39	51.1	2850.0	498.5
Սևան	1	1.20	218.3	218.3	218.3			52.2	2134.8	210.1
Վարդենիս	1	3.10	235.3	235.3	235.3	5	11.35	41.2	2575.1	286.2
Լոռու մարզ										
Ալավերդի						19	6.97	170.4	6424.2	1142.8
Գուգարք	1	0.81	93.4	93.4	93.4	15	5.32	234.6	6065.9	980.1
Սպիտակ	1	1.50	271.9	271.9	271.9			250.0	5555.5	541.1
Ստեփանավան						8	7.76	90.6	1686.6	398.2
Տաշիր						4	1.71	45.3	1384.4	217.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	66	165.82	37.2	2418.6	552.1	61	20.91	279.3	11942.7	3943.5
Եղվարդ	20	31.63	49.3	2950.8	603.6	48	16.10	174.4	11971.8	2752.3
Հրազդան	8	10.00	46.0	1910.0	553.8	25	21.73	130.5	10256.4	1120.1
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	1.00	294.8	294.8	294.8	11	9.80	252.0	1693.1	475.5
Ամասիա	1	4.48	223.2	223.2	223.2			40.9	261.0	120.0
Անի						8	3.47	110.6	546.9	272.5
Աշոցք								58.5	215.8	118.5
Արթիկ	1	1.00	157.5	157.5	157.5	2	0.54	79.4	1428.6	186.5
Սյունիքի մարզ										
Գորիս						8	8.27	92.6	1023.2	378.5
Կապան						6	10.31	120.0	841.6	248.8
Մեղրի						4	0.96	193.0	3000.0	528.8
Սիսիան						3	4.33	46.3	1977.4	266.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	13	6.10	43.3	823.5	304.9	4	1.35	125.0	10000.0	1348.7
Վայք	8	78.00	50.5	192.5	68.2	1	0.12	58.8	1430.7	524.1
Տավուշի մարզ										
Բերդ	1	0.10	361.6	361.6	361.6	1	0.42	213.3	3783.8	390.5
Իջևան						5	5.05	267.5	9454.5	860.2
Նոյեմբերյան						10	8.20	46.7	7368.4	588.3

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. մայիսին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						49	37901.0	130.7	22200.0	2554.0
Ապարան	2	1952.0	126.2	127.2	126.7	3	5230.0	124.1	609.6	212.0
Թալին						1	2730.0	63.2	1454.8	107.5
Ծաղկահովիտ						1	1880.0	100.0	214.3	72.4
Արարատի մարզ										
Արտաշատ	40	46210.4	175.4	280.0	200.9	18	23231.0	173.9	7140.3	924.5
Մասիս	2	750.0	1532.5	1541.4	1537.0	23	16900.0	187.5	25000.0	1208.7
Վեդի						17	18856.0	126.1	5000.0	675.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	438.0	1004.9	1004.9	1004.9	32	22409.0	131.6	9090.9	1212.9
Բաղրամյան						2	2430.0	100.0	833.3	144.2
Վաղարշապատ	3	557.0	1051.2	4697.4	3286.2	72	68242.0	197.4	26528.4	1540.9
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	980.0	186.6	1084.3	383.3
Ճամբարակ						1	3680.0	71.3	2286.2	105.1
Մարտունի	8	4432.0	58.3	113.7	106.6	2	1890.0	119.3	5000.0	270.0
Սևան	2	3000.0	188.1	188.1	188.1	1	4000.0	240.0	3110.4	172.4
Վարդենիս						1	400.0	72.5	987.2	125.2
Լոռու մարզ										
Ալավերդի						2	2350.0	114.3	1388.9	142.2
Գուգարք	5	7732.0	32.4	5202.6	2574.2	8	14105.0	77.9	14083.3	590.5
Սպիտակ						1	650.0	104.9	1348.3	140.1
Ստեփանավան	1	1200.0	138.6	138.6	138.6	1	2030.0	88.2	1666.7	114.2
Տաշիր								45.3	400.0	70.2
Կոտայքի մարզ										
Աբովյան	42	39694.0	411.0	3666.7	3139.3	60	49472.0	264.5	35353.5	2021.2
Եղվարդ	14	11200.0	2955.0	2962.5	2958.2	53	48507.0	173.6	27000.0	2142.8
Հրազդան						5	5245.0	117.7	34848.5	1343.1
Շիրակի մարզ										
Ախուրյան	8	3612.0	290.3	3125.0	1376.4	5	3598.0	113.6	18750.0	331.5
Ամասիա								45.3	274.7	70.1
Անի						1	1000.0	67.9	180.6	99.5
Աշոցք								40.8	144.0	58.1
Արթիկ	1	1000.0	110.0	110.0	110.0	5	7350.0	111.8	5000.0	184.5
Սյունիքի մարզ										
Գորիս						3	1774.0	112.2	1700.0	252.1
Կապան								67.9	2638.9	208.5
Մեղրի						1	510.0	68.5	632.9	130.2
Միսիան						2	2050.0	123.5	875.0	148.8

Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	18	19600.0	127.7	760.0	304.2	5	5032.0	96.7	7659.6	318.3
Վայք								120.7	1448.3	121.4
Տավուշի մարզ										
Բերդ						1	108.0	75.8	810.0	88.8
Իջևան	9	6633.0	220.0	1430.0	601.7	16	16533.0	74.1	14423.1	452.5
Նոյեմբերյան						2	1930.0	125.0	1948.1	143.2

2008թ. մայիսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 9 գործարքներ 6.36 հա մակերեսով, ընդ որում 7-ը՝ /6.23 հա/ Շիրակի և 1-ական՝ /0.06 հա/ Գեղարքունիքի, /0.07 հա/ Վայոց Ձորի մարզերում:

2008թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 994 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.5%: Ընդ որում, վարձակալության գործարքների 38.2% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2008թ. մայիսին 2008թ. ապրիլի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն նվազել է 11.8%-ով, իսկ 2007թ. մայիսի համեմատ աճել՝ 28.3%-ով:

2008թ. մայիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 47 բնակարանների, 45 անհատական բնակելի տների, 342 հասարակական, 40 արտադրական նշանակության օբյեկտների, 508 միավոր /1215.08 հա/ հողերի, 10 ավտոտնակների և 2 այգետնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2008թ. մայիսին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 38 վարձակալության գործարքների /այդ թվում 3 միավոր /0.06 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2008թ. ապրիլի համեմատ նվազել է 25.5%-ով, իսկ 2007թ. մայիսի համեմատ աճել՝ 65.2%-ով:

2008թ. մայիսին հանրապետությունում վարձակալված 1215.08 հա հողերից 6.49 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1208.59 հա հողերի 16.90 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արագածոտնի մարզում՝ 345.20 հա, որից 344.92 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 407.20 հա հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2008թ. մայիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	1	100.00	53	244.93
Արարատ	5	300.00	13	29.44
Արմավիր	0	0.00	6	40.47
Գեղարքունիք	2	4.00	53	179.22
Լոռի	1	3.00	7	23.43
Կոտայք	0	0.00	5	64.65
Շիրակ	0	0.00	10	15.50
Սյունիք	0	0.00	53	119.03

Վայոց Ձոր	2	0.20	2	8.00
Տավուշ	0	0.00	6	10.72
Ընդամենը	11	407.20	208	735.39

2008թ. մայիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2458 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 18.6%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. ապրիլի համեմատ նվազել է 1.5%-ով, իսկ 2007թ. մայիսի համեմատ աճել՝ 27.8%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /47.3%/, առանձնատների /26.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /9.8%/ և հողերի /12.0%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1003 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2008թ. ապրիլի համեմատ նվազել է 3.7%-ով, իսկ 2007թ. մայիսի համեմատ աճել՝ 26.6%-ով:

2008թ. մայիսին հանրապետությունում գրավադրվել են 325.33 հա հողեր, որից 3.82 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 96.0%-ը կամ 312.27 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 0.48 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 107.46 հա, որից 106.63 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2008թ. մայիսին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 263 գործարքներ, որից 165-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքներից 65.8%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակականների, 25.1%-ն՝ անհատական բնակելի տների, 4.9%-ն՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.4%-ն՝ արտադրական նշանակության օբյեկտների, 1.5%-ը՝ ամառանոցների և 2.3%-ը հողերի նկատմամբ: 2008թ. ապրիլի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 11.7 %-ով, ընդ որում Երևանում՝ 12.2%-ով, իսկ մարզերում՝ 10.9%-ով:

2008թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 4 և 3 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: Մասնավորեցման գործարքների քանակը 2008թ. ապրիլի համեմատ նվազել է՝ 22.2%-ով, իսկ 2007թ. մայիսի համեմատ՝ 46.2%-ով: 2008թ. մայիսին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են 2-ական՝ Երևանում և Տավուշի մարզում, 1-ական՝ Արագածոտնի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում:

2008թ. մայիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 2240 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2008թ. ապրիլի համեմատ նվազել է 1.2%-ով, իսկ 2007թ. մայիսի համեմատ աճել՝ 25.0%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 17.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /35.1%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն